

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԺՈՒՌՆԱԼԻԲՍԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ

2023 թ. հոկտեմբերի 20-ի թիվ 3 նիստի

Մինչ օրակարգի հաստատումը ֆակուլտետի գիտխորհրդի նախագահ Ն. Մարտիրոսյանը նշեց, որ ԵՊՀ-ն, հետազոտությունների խթանման և արդյունավետ դասավանդման համար, այս տարվանից դասախոսին տարեկան 700 ժամ բեռնվածության դեպքում 50 ժամ տրամադրում է հետազոտական աշխատանքի համար: Որպես արդյունք յուրաքանչյուր դասախոս ուստարվա ավարտին պետք է ներկայացնի առնվազն մեկ գիտական հոդված:

Այնուհետև Ն. Մարտիրոսյանն առաջարկեց հաստատել նիստի օրակարգը: Բաց քվեարկությամբ ներկաները միաձայն կողմ քվեարկեցին:

ԼՍԵՑԻՆ.- Ա. Մենեմշյանի հաղորդումը ընթացիկ քննությունների նախապատրաստական աշխատանքների մասին:

Ա. Մենեմշյանը նշեց, որ քննությունների օրերը արդեն ֆիքսված են ռեգիստրարում, դասախոսները կարող են մուտք գործել համակարգ և տեսնել դրանք: Ա. Մենեմշյանը տեղեկացրեց նաև, որ 4-րդ կուրսում կան Արցախից բռնի տեղահանված ուսանողներ, ովքեր պիտի նաև տարբերություններ հանձնեն (մոտ 33 կրեդիտ):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Լ. Կ. Մայսոյան, Զ. Զ. Մարգարյան, Ա. Դ. Հակոբյան, Վ. Գ. Պետրոսյան:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաղորդումն ընդունելի գիտություն:

ԼՍԵՑԻՆ.- Մագիստրոսական թեզերի թեմաների հաստատման հարցը:

Տպագիր և հեռարձակվող լրատվամիջոցների ամբիոնի վարիչի պաշտոնակատար Գ. Աբրահամյանը նշեց, որ նախապես հանդիպել և թեմաները քննարկել է ուսանողների հետ: Թեմաներից 3-ը միջգիտակարգային են, իսկ 5-ը՝ նախագծեր:

«Հեռուստալրագրություն» մագիստրոսական ծրագրի ղեկավար Ն. Վարդանյանը առաջարկեց ապագայում ոչ միայն միջգիտակարգային, այլև միջբուհական մագիստրոսական թեզերի թեմաներ հաստատել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Դ. Վ. Պետրոսյան, Ա. Ռ. Մենեմշյան, Ա. Յու. Երզինկյան, Ն. Է. Վարդանյան:

ՈՐՈՇԵՑԻՆ. - Հաստատել «Հեռուստալրագրություն» մագիստրոսի կրթական ծրագրի սովորողների թեզերի թեմաները:

ԼՍԵՑԻՆ.- Բակալավրիատի 4-րդ կուրսի ավարտական աշխատանքների (առկա ուսուցում) թեմաների հաստատման հարցը (զեկուցողներ Դ. Պետրոսյան, Գ. Աբրահամյան):

Դ. Պետրոսյանը և Գ. Աբրահամյանը տեղեկացրին, որ 4-րդ կուրսի ուսանողների հետ հստակեցրել են բոլոր թեմաները:

Դ. Պետրոսյանը առաջարկեց նաև 4-րդ կուրսի ուսանողների մասնակցությամբ դեկտեմբերին կազմակերպել ուսանողական գիտաժողով: Ձեկուցվող թեմաները պետք է վերաբերեն ավարտական աշխատանքներին:

Գիտլսորհուրդը հավանություն տվեց նախաձեռնությանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ն. Ն. Մարտիրոսյան, Լ. Կ. Սայադյան, Ա. Ռ. Մենենշյան, Մ. Ս. Մկրտչյան:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել բակալավրիատի առկա ուսուցման 4-րդ կուրսի ավարտական աշխատանքների թեմաները:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՔԱՐՏՈՒ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

